ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Ի Պատասխան Իրանա-Հնդկաստանի կրոնական Խորհրդի հայտարարութեան Ամենայն Հայոց Հայրապետութեան ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոսը նույն կրոնական Խորհրդին ուղարկել է հետևյալ գրութիւնը.

Ի հետևումն Արդո կրոնական Խորհրդիդ տարվույս մայիսի 30-ի գրութեան հաստատում ենք Բարեկրոն Տ. Ներսես քահանա Դավթյանին Իրանա-Հնդկաստանի թեմի կրոնական Խորհրդի անդամ, վոխարեն Բարեկ. Տ. Համբարձում ավ. քահ. Վարդանյանի, որ իբրև նոր նշանակված վիճակավոր Կալկաթայի Հայոց, մեկնել է իր պաշտոնատեղին:

Օրհնում ենք Կրոնական Խորհրդիդ նորընտիր անդամ Տ. Ներսես քահ. Դավթյանին՝ մաղթելով Բարձրյալին շնորհել նրան կար և ուժ՝ պատվով և բարեխղճութեամբ վարելու իր նոր պաշտոնը ի մխիթարութիւն ժողովրդյան և Մեր:

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ